

Աղքատ մը վիճակահանութենէն տասն երկու հազար ոսկի կշահի եւ քարեկամաց քարեւ տալը կդադրեցնէ:

Նոր հանք մը կգտնուի, սուտերու հանք, խմբագրի մը կողմէն:

Շուկայն մարդ չկայ. ակռայի ցաւերը կշատնան. կէս գլխու ցաւեր երեւան կու գան. գործերը ձախող վիճակի մէջ են. քաջութի՛ւն, քաջութիւն:

Ամեն մարդ օղիի գաւաթին մէջ կփնտռէ մխիթարութիւն:

16 - 21 Նոյեմբեր

Պարզ եւ մերթ անձրեւ:

Օրինեալ է Աստուած:

Շառերը մերկացան: Ձմեռն կսկսի զգալի ըլլալ. մինչեւ առտու *վիսթ* կխաղացուի ամեն տեղ. տեղ տեղ ալ *պեզիք*: Ամենքն աչքերնին չորս քացած՝ զիրար կողոպտել կջանան. անմեղ զբօսանք:

21 - 30 Նոյեմբեր

Մերթ *պեզիկ*, մերթ *պրիճ*: Երիտասարդին մէկը պարահանդէսի մէջ աղջիկ մը կը գտնէ, կ'առնէ, հետը կտանի կարգուելու:

Ուրիշ սիրահար երիտասարդ մը մինչեւ լոյս պատուհանի մ'առջեւ կսպասէ ու կդողայ. մէկէն ի մէկ հարստանալը դիրին չէ, տղա՛ս:

Այս ամսոյ մէջ ծնող մանչ կամ աղջիկ երկուքը մէկէն քարեպտուղ գաւակներ կ'ըլլան՝ եթէ անոնց դաստիարակութեան հոգ տարուի:

ԴԵՎՏԵՄԲԵՐ

1 - 6 Դեկտեմբեր

Քիչ մը հողմ, քիչ մը անձրեւ:

Մեծ մարդու մը հովանաւորութեան ներքեւ պարահանդէս մը կտրուի: Խմբագրին մէկը վարդապետ կձեռնադրուի, վարդապետ մ'ալ կը պատժուի: Փոխառութեան զրոյցք կը լսուին: Գողեր կմտնեն տուները եւ մէկ մէկ քիչ բան վերցնելով կշատանան: Ապրին ասանկ սակաւապետ գողերը: